



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 18 ՄԱՐՏ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն սքարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՈՍ 39

ԻՆՁ ՎԱՂԱՆՑՈՒԿ Է ԿԵԱՆՔԸ

Յոյց տուր, ո՛վ Տէր, իմ վախճանս.

ի՞նչքան պիտի ըլլայ տելոդութիւնը կեանքիս,

գիտնամ՝ թէ ինչքան վաղանցուկ եմ ես:

Գիտեմ, կեանքիս օրերը մատի վրայ կը համրուին,

անոր տելոդութիւնը ոչինչ մըն է քու աչքիդ.

եւ արդարեւ լոկ շունչ մըն է մարդուս գոյութիւնն ամբողջ:

Արդարեւ մարդս շրջուն ստուեր մըն է լոկ.

գուր տեղ կը տագնապի, կը դիզէ,

առանց գիտնալու՝ թէ ո՛վ պիտի ժառանգէ զայն:

Հետեւաբար, ուրիշ որո՞ւ յոյս դնեմ, Տէր, դուն ես յոյսս:

Բոլոր իմ յանցանքներէս փրկէ զիս.

անմիտ մարդոց ծաղրին առարկայ մի՛ դարձնես զիս:

Լսէ իմ աղօթքս, Տէր, մտիկ ըրէ աղաչանքս,

անպատասխան մի՛ ձգեր արցունքներս:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենատուր Երրորդութիւնն, սուր աշխա՛հիս խաղաղութիւնն:

Եւ Հիւանդաց բժշկութիւնն, ննջեցէլոց արքայութիւնն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,

Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՂՈԹՔ

Տէր Աստուած, դուն որ ողորմած ես եւ գթած, համբերատար եւ առատագութ,

եւ կը մեղքանաս մարդոց վրայ բերելու պատիժը անոնց չարիքներուն:

Դուն՝ որ մեղաւորին մահը չես ուզեր, այլ՝ անոր դարձն ու փրկութիւնը:

Միտքարէ մեզ, եւ ապաշխարութեան առիթ տուր:

Որպէսզի հոգիով առողջացած, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ

կարենանք ժառանգել յաւիտեանական կեանքը,

եւ բոլոր սուրբերուդ հետ միասին փառաւորենք քեզ՝

Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, յաւիտեանս: Ամէն:

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ

ԾՆՆԴՈՑ 3:14-15



Աստուծոյ փրօած պատուիրանը «մի՛ ուրեր», պէտք էր ծառայէր որպէս լոյս եւ կեանք, քանի Աստուծոյ խօսքը լոյս է եւ ճրագ մեր քայլերուն եւ շաւիղներուն (Մաղմուս 119:105): Միւս կողմէ, մարդը նաեւ ցոյց պէտք էր փար խոնարհութիւն Աստուծոյ նկատմամբ, որ սակայն անոր ունեցած հպարտութիւնը պարճաւ դարձաւ անփութի, ու մեղքի մէջ իյնալու:

ԱՍՏՈՒԾՈՑ ԴԱՏԱՍՏԱՆԸ (14-15)

Այս հարուածը մեզի կը ներկայացնէ Աստուծոյ դարաստանը նախ օձին, կնոջ եւ ապա մարդուն: Հակառակ այն իրողութեան, դէպքերը պարահեցան հերեւեալ կերպով. Օձը կնոջ, կինը մարդուն: Իսկ հարցադրումը փրօտի ունեցաւ Աստուծոյ կողմէ նախ մարդուն, ապա կնոջ եւ ի վերջոյ օձին:

Հերաքրքրականօրէն օձը նաեւ կը ներկայացնէ ցանկութիւնը, կինը մեր զգայարանները, իսկ մարդը մեր միտքը: Եւ ահա ցանկութիւններն են որ մեր զգայարանները կը շարժեն, իսկ զգայարանները իրենց ազդեցութիւնը կ'ունենան մեր մտքին վրայ: Ասոր համար է, որ Աստուած նախ կը դատապարտէ ցանկութիւնը, ինչպէս Քրիստոս պիտի ըսէ. «Եթէ ցանկութեամբ նայիս» (Մարտ 5:28):

Օձին դատապարտութիւնը

Այս ընկուղ համար. «անիծեալ ըլլաս, փորիդ վրայ քալես, ու կեանքիդ բոլոր օրերը հող ուրես»:
Առաջին հերթին Աստուծոյ անեծքն է որ կը փրօտի Օձին, եւ այս պարագային Չարին:

Կեանքիդ բոլոր օրերը հող ուրես: Հողը երկու հակադիր բաներու խորհրդանիշ է. կեանք եւ մահ: Այս պարագային կը նշանակէ Օձը, Չարը մահուան իշխանութիւնը ունենայ: «Ո՛ր է մահ, յաղթանակդ, ո՛ր է մահ, քու խայթոցդ» (Ա Կորնթ 15:55):

Այսպէս կը կարդանք Օձի ինքնութեան մասին Եսայի 14:10-15, նաեւ Եզեկիէլ 28:11-17: Ահա Եզեկիէլի հարուածին մէջ կը ներկայացուի չարին ծագումը՝ քերովբէ մըն էր, որուն յանցանքը՝ աստուածանալու ցանկութիւնն էր:

«Քու ու կնոջ մէջտեղ, քու սերունդիդ ու անոր սերունդին մէջտեղ թշնամութիւն պիտի դնեն»:
Ահա առաջին իսկ առիթով Աստուծոյ կողմէ փրօուած փրկութեան խոսքումը: Հերաքրքրականօրէն օձին ու կնոջ միջեւ թշնամութիւն: Օձին եւ կնոջ միջեւ, օձին սերունդին եւ կնոջ սերունդին միջեւ: Մնայուն կերպով կրկնուող իրականութիւն մըն է կեանքին մէջ, օձին կողմէ մարդը խաբելու եւ Աստուծմէ հեռացնելու: Եւ ահա մնայուն թշնամութիւն եւ մնայու պայքար, որ ամէն մէկ մարդ անհար ունի օձին հետ:

«Ան քու գլուխդ պիտի ջախջախէ եւ դուն անոր գարշապարը պիտի խայթես»:
Եբրայական լեզուին մէջ կրունկը խայթել կամ բռնել կը նշանակէ խաբել (Ծննդ 25:26): Եթէ օձը միշտ պիտի փորձէ մարդը սնորհեցնել եւ Աստուծմէ հեռացնել, սակայն մարդն ալ կարելիութիւնը ունի օձին գլուխը ջախ-ջախելու, որ կը նշանակէ յաղթանակ փանելու, որ փրօուած է Աստուծմէ:

Ինչո՞ր կինը: Կինը եւս կարեւոր դեր ունի այս յաղթանակին մէջ, որովհետեւ ան միայն չէզոք գործիք մը չէ միայն մարդ ծնանող, այլ միաժամանակ դատաւարակող, պատրաստող: Միւս կողմէ, կինը այս պարագային, ու մանաւանդ կնոջ սերունդ բացառութեան մէջ կարելի է փեսնել, Մարիամն ու Քրիստոսը (Փաղ 4:4): Ահա Աստուծոյ հայրական խնամքն ու հոգաբարութիւնը, որ նախքան կնոջ ու մարդուն խօսք ուղղելը, մարդկութեան փրկութեան կարելիութիւնն ու խոսքումն է որ կու տայ:

ԱՂՈՐԹ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի փութ եւ ի գիշերի,
ի նստիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*